

ցին: Սոյն շրջանէն յետոյ ազդեցութիւնը կը սկսի տկարանալ, և նոր թագաւորութիւնը համեմատաբար եզրիպտացի անխառն տիպարի մը զօրանալու շրջանին կը հանդիպի: Նոր թագաւորութեան ասիական աշխարհակալութիւնները օտարոտի տարբեր մտուցին եզրիպտոսի մէջ: Ասորիքի հետ սերտ շփում ունեցան:

Սակայն, այն ատեն աւելի կարեւոր եղաւ եզրիպտական քաղաքականութեան ծաւալումը ի Նուպիա: Հոն եղած քաղաքական զարգացումը, մեծ հակադրութիւն մը (contrasto) կը կազմէ եզրիպտականին հետ: Նուպիոյ մէջ, հուսկ, ստորին սեւամորթ ցեղերու ձեռքն անցաւ գերիշխանութիւնը:

Եզրիպտական հին թագաւորութեան իշնալով՝ Ասորիները, Հայերը, Յոյները և Միջերկրականի ուրիշ ժողովուրդները Եզրիպտոս խուժեցին հոն հաստատուելու:

Այն ատեն ցեղաբանական հետաքրքրական իրողութիւն մը առաջ եկաւ, ժողովուրդը Նախկին ազգատոհմերու մարդաբանական տիպարին վերադարձաւ:

Հ. ՍՐ. Ո.

ՍՐԲԱՎԱՅՐԻՆ ԿԱՆԹԵՂԸ

ԳԼՈՒԽ Ա.

ԻՒՐ ԺԱՃԱՆՁՆԵՐԸ

Ո՛ր առնէր զիւ ըստ առաջնորդի
Առաջնորդի զհետէ զիւ: Եւ
Եւ զիւ զիւ զիւ զիւ զիւ զիւ
Եւ զիւ զիւ զիւ զիւ զիւ զիւ
Եւ զիւ զիւ զիւ զիւ զիւ զիւ

Առաջիկայ պատմութեան գէպը հանդիպած է անցեալ դարու մէջ: Պրեքնեանց ամենէն աւելի ապահաժօտ խորհրդուն մէջ, ոչ այնչափ հեռու սահմանագիծէն Սպանիոյ, կար պզտիկ և գիւղական եկեղեցի մը, բլրոյ մը վրայ շինուած, և ճանչցուած Մոնթէ-Մարիա անուամբ:

Այս փորձիկ եկեղեցին համեստ պարզութիւն մ'ունէր դուռնէն, բայց հաստատուն շինուած և իւր հնութեամբ նշանաւոր էր: Սակայն անոր ներքին կողմը զարդարուած էր շատ հարստութեամբ: Խորանը կը փայլէր գեղեցիկ արծաթեայ նօթներով. և երկու կողմերու որմերը գրեթէ ձեփուած էին ամէն տեսակ ուխտական յիշատակներով և հոն կախուած արծաթէ նուէրներով, իբրեւ երախտագիտութեան նշան մը այն շնորհաց, զորս հաւատացելոց բարեպաշտութիւնը կը սեպահակներ ամէնօրեանս: Աստուածամօր բարխօսութեանը, որուն նուիրուած էր այս եկեղեցեակն կամ մատուռը, ինչպէս որ ալ ուզուի ըսել: Յիրաւի, թէ մէկ կողմէն և թէ միւս կողմէն շատ մղոններ հեռաւորութեամբ շրջակայ բոլոր քնակիչք այս մատուռը մեծապէս կը յարգէին, և զայն կը հռչակէին իբրեւ մեծ ջերմեռանդութեան տեղ մը և իբրեւ նպատակ ջերմեռանդն ուխտագնացութեանց: Բարձր, բայց խորանին ետքը, որուն վրայ կ'երևար գեղեցիկ հարուստ տապանակ մը, արձան մը կար անարատ կուսին, իւր Աստուածային որդին գրկին մէջ բռնած: Արձանը բնական մեծութեամբ էր, սպիտակ մարմարով, և հին գեղեցիկ գործ մը: Տիրամօր արտայայտութիւնը հիանալի քաղցրութիւն և բարութիւն մ'ունէր, և մանուկը այնպիսի կերպարանք մը կը ցուցնէր որ անկէ աւելի ամենասիրելի և միանգամայն ամենավեհ չէր կրնար երեակայուիլ: Մատուռն մէջտեղ խորանին առջև կախուած էր մեծ արծաթեայ կանթեղ մը, ուղղափառ եկեղեցեաց և մատուռներու սովորութեան համեմատ, որ գիշեր ցորեկ անընդհատ կը վառէր: Մարդիկ որչափ որ կը յիշէին, ամենէն աւելի սաստիկ փոթորկի միջոց ալ անիկայ երբէք չէր մարած, և բուն այս բանիս համար ժողովրդեան ջերմեռանդութիւնը կը հայթայթէր անոր առատութեամբ իւր, այդ լեռներու ձթթեխներէն հանուած ամենամաքուրը, և այս բանը այն բարեպաշտ գիւղացիներէն շատերու համար ամենակարեւոր գործ մ'էր: Այս

կանթեղը կը փայլէր իբրև փարոս և միանշա՛մայն հաւատարիմ առաջնորդ գիշերատոնն ճանապարհորդողին: Անոր համար այնպէս մը կախուած էր, որ իւր լուսաւոր ճառագայթները անցնելով դրան վրայ բացուած բոլորշի պատուհանէ մը շատ հեռուէն կրնային տեսնուիլ:

Ուղին որ անցնելով գանազան հիւղակներու առջևէն, կը տանէր արքունի ճանապարհին մէջ և կ'անցնէր ձորին մէջէն, այդ մատրան մօտ, նեղ և դժուարին առապար մը կ'ըլլար, ամբողջ լերան կողերուն երկայնութեամբը, միշտ անդունդի մը եզերաց վրայ. և ճամբորդին բռնելիք ուղղութիւնն էր առաջ երթալ առանց վախի, քանի որ դիմացին կը տեսնուէր կանթեղին փայլը, բայց հագիւ թէ այս՝ ժայռի մը ետև ծածկուէր, ճանապարհորդը պէտք էր իսկոյն դառնալ աջակողմը, և իջնալ առանց վախճալու, որովհետև անդունդը անմիջապէս հոն դիւրին զառիվայրի մը կը փոխուէր, որ կը տանէր արքունի ճանապարհին մէջ: Ճամբուն այս կանոններն այնչափ ապահով էին որ որչափ կը յիշէին այն գիւղացիները, ոչ ոք լսած էր պատմել որ ամենաթեթեւ ծախորդութիւն մը հանդիպած ըլլալ այնպիսի ճամբէ մը անցնելու միջոց: Այսպէս ջերմեռանդութեան գեղեցիկ առարկայ մը, ամենաօգտակար բանի մը ծառայեց, և պատճառեղաւ ընկերական մեծ բարիքի մը. այսպէս Աստուծոյ խորանը իւր զուարթ ճառագայթները արձակեց դուրս լուսաւորելու համար այն իւսուր և վտանգաւոր ճանապարհը (ո՛վ որչափ նման կենաց ճամբուն) և այսպէս միայնակ ճանապարհորդին մտածութիւնները կը դառնային դէպ ի այն տեղը ուր իւր բարի աստղը պայծառ կը վառէր Անարատ Գառնի ողորմութեան գահոյիցն առջև, հոն ընծայելու համար հոգեով իւր յարգանքը, և կամ զինքը կը ձգէին խորհրդածելու Նախախնամութեան միշտ բաց և հսկող աչքերուն վրայ, որ իւր ճառագայթները կ'արձակէ երկնից բարձունքէն մեր դժուարին ճամբուն վրայ գտնուող քաջալերելու և մինչև հոն վերը մեծ գի առաջնորդելու համար:

Մատուռը յանձնուած էր մենակեաց քահանայի մը խնամոց, որ կը բնակէր մերձակայ խղճուկ հիւղի մը մէջ, և կ'հոգար մերձակայ բնակչաց հոգեւոր պիտոյքը, վասն զի ժողովրդապետական եկեղեցին բաւական հեռու էր անկէ:

Ճամբուն վրայ զոր նկարագրեցինք, և զերթէ երկու մղոն հեռու այդ մատուռէն, պզտիկ և խեղճ գիւղ մը կար որուն բնակիչքը մեծաւ մասամբ լեռնիցք էին, որ կ'աշխատէին շրջակայ անտառներուն մէջ: Այս գիւղը կազմող հիւղերու մէջ, կար մին, ծանօթ իւր մարդութեամբը, թէպէտ և միւսներուն նման խեղճ էր, և հոն բնակող երիտասարդ ամուր մատով կը ցուցուէր իբրև գիւղի ամենաճարտար, ամենաառաջին և ամենագործը, Մինչդեռ փեսայն իրերը կ'աշխատէր լեռներուն մէջ, իրեն կինը Աննեթթա կը նստէր շարունակ իւր մանկու գործիքին առջև, կամ կը զբաղէր մեծ ուշադրութեամբ ամէն ընտանեկան հոգերու, միշտ առջևը իւր ոտքերուն դիմաց ունենալով իրենց միակ դուստրը, որ թէպէտ դեռ երեք տարեկան չէր եղած, բայց մեծ մտաց և մեծ առաքնութեան յայտնի նշաններ կու տար: Ինչպէս բոլոր միւս գիւղացի աղջիկներ, որ կը ծնան էին մատրան հովանոյն տակ, ինքն ալ սրբազան աւագանէն Մարիամ կոչուած էր:

Այս աղջիկը իւր ծնողաց մեծ ուրախութիւն մըն էր. և որովհետև նա մեծապէս վառվորուն բնաւորութեան հետ ունէր միանշա՛մայն ծայրագոյն քաղցրութիւն վարմանց, և մնաց ազնուականութիւն մը, հետեալարար գիւրին է երևակայելը թէ որչափ խորին և գործվալի սիրով կը պահպանէին անոնք իրենց այս միակ ինչքը: Ուրեմն ապշելու չէ եթէ քիչ ժամանակ վերջ այս աղջկան ծնողքը ցաւօք լեցուեցան, տեսնելով որ հետզհետէ կը նուաղի անոր սիրուն դէմքը և առողջ կազմուածքը:

Իրենց վիշտը այնչափ էր որ քանի մ'օր ոչ մին և ոչ միւսը համարձակեցան այս բանիս վրայ խօսելու, բայց առաջ երթալով

հարկաւոր եղաւ յայտնապէս բռնկին օգնութիւնը, վասն զի աղջիկն ամէն օր աւելի սոգոյն կ'ըլլար, կը հիւժէր, և բուլոր ուժը կը կորսնցնէր: Յետոյ տեսնելով որ մարդկային գիտութեան ամէն փորձը պարապ կ'ըլլայ, բռնկը յայտնապէս իմացուց, որ հրաշք մը միայն կրնար ազատել այդ փոքրիկ աղջիկը: Այսպիսի տխուր լրոյ մը վրայ՝ քիչ ծնաց որ այն անմիջեմբայ ծնողքը խելքերնին կորսնցնէին. վերջապէս, չի յուսալով օգնութիւն մը աշխարհէն, եռանդեամբ դարձուցին իրենց միտքը յերկինս, որուն թերեւ շատ ուշ կը դիմէին:

Աշնանային գեղեցիկ օրուան մը արեւ մուտքի միջոցն էր, երբոր տեսնուեցան երկու տառապեալ ծնողք որ դանդաղաշարժ առաջ կ'երթային նեղ ճամբուն երկայնութեամբ, զոր նկարագրեցին, յայտնապէս դիմելով դէպ ի Մոնթէ-Մարիա: Մայրը կը կրէր ամենաթանկագին բեռ մը, ապահովապէս սրտին մէջի զգացածն շատ աւելի թեթեւ, և այս՝ իւր տկար և հիւանդ զաւակն էր, խնամքով փաթթուած աւտինքուր մէջ, թէպէտ և օդը դեռ տաք էր ջերմ քանի մը դեռ նոր անցած ըլլալով: Արեգակը կը մտնէր երբոր ասանք հասան մատուոր, և շատ գիշացիներ, իրենց գործերէն դարձած, հոն կը զբոսնուէին երեկոյեան սովորական այցելութեան համար: Դուռը բաց էր և արեգական վերջին ճառագայթները ցլանալով եկեղեցեակին մէջանդ, անոր ներքին մասը կը նկարէին ոսկեզօծ ճառագայթներով, խորանին նկարները, վարագոյները, և փայլուն զարդարանքները ստուգապէս արտաքին կարգի հարստութեամբ և շքեղութեամբ մը զարդարելով: Կարծես թէ այն էր մեծ վայելչութեան ժամը. Բարձրեալ Աստուծոյ զահրիյց առջև մեծամեծ և ջերմեռանդն աղօթքներ մատուցանելու վայրէկեանը, և թագաւորաց թագաւորին անմիջական ներկայութիւնը կարծես կը տեսնուէր բոլոր իւր շքեղութեամբ ուրախ սրտերու երգերը մոխր ընելու, և ամենաուստ օրհնութեան զանձները բաշխելու հա-

մար: Իւրաքանչիւր երկրպագու ծունդրած, ամփոփուած, ջերմեռանդ դիրքով, հագիւ կրնար ժուժալ լուսոյ կենդանի կայծերուն, զորս արեգական ճառագայթները արծաթեայ տապանակէն կը ցլացնէին, և կը զգար որ ինքը երկրիս ամենակարող և հարուստ իշխանէ մը աւելի ազնուացած և գեղեցկացած էր: Իրենց գեղեցկական բուրդերը կարծես երկնից ոսկի վրձինով հիւսուած էին. իրենց պատուական գլուխները, այսպէս ըսելու համար, շրջապատուած և պսակուած էին փառաց պսակով մը, և իրենց դէմքերը եռանդեամբ արտայայտութեամբ և խոնաւ աչքերով զարձած էին դէպ ի այն բարձրութիւնը, որուն պատուանդան մ'է ամէն երկրաւոր կարողութիւն: Այս վայրկեանիս երգիտը կը լսեցնէր իւր զօրաւոր ներդաշնակութիւնները, և ամէնքը կը միաբանէին երեկոյեան անկեղծ բայց ամենազօրաւոր շնորհակալութիւն մը՝ մատուցանելու:

Ճշգիւ այս ժամանակիս Բիէրրոյ և իւր կինը հասան դրան սեմին վրայ, և երկուքն ալ զրեթէ բնական ազդմամբ կեցան հոն, իբրև անկարողք աւելի առաջ երթալու:

Այն շողողուն լոյսը, այդ ոսկեզօծ մթնոլորտը, այդ ուրախ դէմքերը, այդ հնչուն շեշտերը ամենեւին չէին միարանիւր իրենց հոգեց մտածութեանց հետ, չէին համապատասխաներ իրենց վշտացեալ սրտերուն. իրենց դառն վշտաց մէջ այդ տրտում ծնողք հոն չէին եկած մեծ և եզական պարգևներ ընդունելու համար, այլ մանաւանդ խնդրելու համար միայն շնորհք, գթութիւն և խաղաղութիւն: Սակայն մէկէն ի մէկ ամէցան իրենց այդ առերևոյթ թերահաւատութեան վրայ. և արիարար օգուտ քաղելով այն առանձնաշնորհութիւնէն զոր ուղղափառ զգացումը կու տայ թշուառաց, առաջ գնացին մինչև սեմը, ոսկից բեմին մէջ կը մտցուէր:

Հոն մայրը դրաւ իւր ցաւալից բեռը, և երկուքն ալ ծունդ դրած, իրենց ձեռքերով գոցեցին իրենց արտասուալից աչ-

քերը, ստիպուած այդ շլացուցիչ արտա-
քոյ կարգի փայլէն, որ արդէն սկսած էր
նուաղիլ: Երկայն, խոր և ցաւագին եղաւ
իրենց աղօթքը:

Այն միջոցին երգիոնը դադրած էր հըն-
չեկէն, գեղացիք ետեւ ետեւ դուրս ելած
էին, և անապատականը մատրան դուռը
գրեթէ փակած ըլլալով, արգիլուած էր
այսու արեգական վերջին ճառագայթին
ցոլացումը. նա մեկնելու միջոց ցած ձայ-
նով ըսաւ տառապեալ եզրօրը. «Գիւռը կի-
սաբաց ձգած եմ, կեցէջ դեռ որչափ որ
կ'ուզէք: Քաջութիւն ունեցէ՛ք. Աստուած
զձեզ մխիթարէ, և Ամենօրէնեալ Տիրամօր
բարեխօսութեամբ թող լսէ՛ ձեր աղօթիցը»:
Այս բարի մենակեացը չի հետեւեցաւ Հեղի
քահանայապետին օրինակին, որ յանդի-
մանեց զԱննա տաճարին մէջ երկայն ա-
ղօթելուն համար:

Այսպիսի խօսքերը լսելով, դէմքերնին
բացին երկուքն ալ և աչքերնին բարձրա-
ցուցին: Իրենք միայն էին իրենց փոքրիկ
զաւակին հետ. կատարեալ լուութիւն մը կը
տիրէր իրենց շուրջը: Ուրիշ լոյս մը չի-
կար բաց ի անկէ գոր կ'արձակէր Սրբա-
րանին կանթեղը. իրենց և խորանին մէջ-
տեղ կեցած, և օդոյ մէջ կախուած. ար-
ծաթափայլ նուաղ լոյս մը կը մեկնէր
անկէ, առանց ճառագայթներ կազմելու,
առանց նուրբ բոցեր ցրուելու, այլ ամէն
կողմ հաւասարապէս ծաւալելով իւր աղ-
բիւրէն, լեցնելով սուր տեղույն կեդրոնը
քաղցր և ամենաթինջ լուսոյ շրջապատով,
և անկէ, հանդարտ և յստակ վտակի
մը նման ամենահեռաւոր անկիւնները և
ամենածածուկ խորշերու մէջ տարածուե-
լով. Պայծառ լոյս մ'էր որ կարծես հան-
դարտ և լուռ զօրութիւն մը կ'ազդէր բնու-
թեան վրայ. իւր լուսոյն տակ կը դադրէր
վշտաց և տառապանաց խայթը: Դառն
ծիծաղ մը, նսեմ խօսք մը, բարկացող
տրտունջ մը սրբապղծութիւն պիտի համա-
րուէր, եթէ երբէք հոն կարելի ըլլար տեղի
ունենալ: Նա իրեն բոլորովին յատուկ մըթ-
նոլորտ մը կը կազմէր, քանի որ իւր սի-
րուն և չափաւոր լոյսը համապատասխան

շերմութիւն մ'ալ կը տարածէր օդոյ մէջ,
զոր արտաքին ցրտութիւնը չէր կրնար
ցրուել. այնպէս որ իր հաճելի զաղջու-
թիւնը կարծես ամէն ցուրտ օդ կը փախ-
ցնէր: Ամէն առարկայից փափկութիւն
և գեղեցկութիւն մը կու տար: Ընդունուած
շնորհաց անպաճոյճ յիշատակները, որ
չորս կողմը կախուած էին, և աղքատին
նկարները որ վերի մասերը կը զարդա-
րէին, ծածկելով փոքրիկ մանրամասնու-
թեանց անկատարութիւնները, և կարծես
միայն ամենագորուտը գիծերը ցուցնելով,
իբրև արուեստի զուլիս գործոցներ կ'երե-
ւային աչաց, և անոնց կեցուածքները որ
պայծառ լուսով խիստ և բռնադատ պիտի
երևէին, այդ մեղմ լուսէն կը չափաւորուէին
և կ'ազնուանային: Բայց այս կանթեղին
ամենաբաղդը ազնեցութիւնը աւելի քան
ուրիշ տեղ՝ կը տարածուէր հոգւոյն ներքին
զգացմանց մէջ: Կարծես որ նա կը վառէր
սրտին մէջ սրբազան լոյս մը, իւր փայ-
լուն լուսոյն համապատասխան, պայծառ
և հաշտեցուցիչ ամենէն աւելի տարածան
զգացմանց. նուաճելով հոգւոյն ամբար-
տաւանութիւնը և հպարտութիւնը, ցա-
ծուցանելով բարկութիւնը, ազնուացնելով
խստութիւնը, և ցուցնելով սխալ մտա-
ծութեանց խարէութիւնները: Նա կը հան-
դարտեցնէր, կը քաղցրացնէր, կը փափ-
կացնէր զհոգին, և հոն կը դրոշմէր փա-
փուկ և քաղցր զգացումներ:

Եւ երբոր, իրենց շուրջը ամենայն ինչ
իրենց ցաւին հետ կատարեալ ներդաշնա-
կութեան մէջ զգալով, թշուառ ծնողքը
աչքերնին բարձրացուցին դէպ ի Փրկչին և
իւր Մօր պատկերը, կանթեղին լոյսը ամե-
նապայծառ կը հոսէր անոնց վրայ, և իրենց
կերպարանաց գծագրութեան այնպիսի սի-
րոյ և կարեկցութեան զգացում մը կու տար,
որ իրենց ներկայութիւնը երեւած չէր
երբէք աւելի սիրալիր և լաւագոյն սրա-
մաղրութեան մը մէջ, քան զայն յորում
իրենց երկուքին սրտերն ալ կը փափա-
քէին գտնաւ զանոնց այն վայրկեանին Ուս-
տի իմացան թէ՛ այն էր իրենց թշուա-
ռութեան համար շնորհ և ողորմութիւն

խնդրելու վայրկեանը, այն էր ունկնդրու-
թեան առանձնասնեակն. ուր աղքատին
խնդիրը երես առ երես պիտի ընդունուէր
մարդասիրութեամբ, և ականջն ի վար
պիտի խօսուէր:

Երկուքն ալ աղօթեցին շատ ժամանակ
և մեծ եռանդեամբ իրենց որդւոյն վրայ,
այդ տեղւոյն և այդ ժամուն հանդիսաւոր
ազգեցութեան տակ: Շատ խորին էր հօ-
րը եռանդը իսկ մօրը աւելի գորովալից,
բայց մէկ էր երկուքին աղօթքը, մէկ և
հասարակաց էր ուխտերնին: Եթէ աղջիկը
բժշկուէր, յաջորդ եօթը տարիները միշտ
ճերմակ պիտի հագուէր, իբրև նշան մը
աղջկանց ամենէն աւելի Անարատին նուխ-
րուած ըլլալուն, և միշտ աւելի պիտի դաս-
տիարակէին զինքը բարեպաշտութեան և
պաշտօնասիրութեան մէջ, բաց աստի նոյն-
չափ ժամանակ ծնողքը ծոմ պիտի պա-
հէին շարաթը մէկ անգամ « Այո՛ աղա-
ղակեց Բիէրոյ, հայրը, բնական անկեղծ
բանաստեղծութեամբ մը, թող անի սա սպի-
տակ և մաքուր շուշանի մը պէս, որուն
արմատը լեռնային ձիւներով կը մնանի:
Թող ըլլայ ծաղիկ մը Աստուծոյ խորանին
առջև: Նա պիտի լուսաւորէ այս Սրբա-
րանին մէջ ինչպէս կանթեղը, որ հիմայ
հոս մէջտեղ կախուած է. իւր առաքլնու
թիւնները քաղցր լոյս մը պիտի սփռեն
այս սուրբ տեղւոյն մէջ, երբոր զգացեալ
երախտագիտութեամբ մը ծնրադրէ հոն
ուր հիմայ պառկած է. — Ո՛հ, մի՛ մա-
րեւ մեր աչաց լոյսը! Ո՛հ թող չի յան-
դըգնի մահը իր ձեռքերն ասոր վրայ դնե-
լու, այժմ որ այլ ևս Քեզի նուիրուած
է, և ոչ սրբապիղծ ձեռք մը յանդգնի
մարել այն սուրբ բոցը որ կը վառի քու
խորանիդ առջև»:

Մինչդեռ եռանդնավառ ծնողքը կը շա-
րունակէին իրենց աղօթքը, փոքրիկ աղ-
ջիկը կը հանգչէր ամենախաղաղ և կա-
նոնաւոր քնով մը, որպիսի քուն մէկ քանի
շարաթէ ի վեր երբեք չէր վայելած, և
քուն ասոր մէջ տեսան անոնք իւր բժշ-
կութեան առաջին նշանը: Երբոր անոնք
իրենց հիւղը դարձան, գիշեր էր, բայց

փոքրիկ Մարիամը շարունակեց խաղաղ
քնանալը, և յաջորդ առաւօտը անիկայ
յայտնապէս շատ աղեկցած էր, այնպէս
որ քիչ օր վերջ կրցաւ նորէն կենալ
իւր սովորական տեղը մօրը ծռնկերուն
վրայ:

Այս միջոցին ինքն այն էր ինչ որ կը
հասկնան Գաղղիոյ մէջ *Vouée au blanc*
(սպիտակի նուիրուած) ըսելով, ամբող-
ջապէս սպիտակ կը հագուէր, ինչպէս որ
կուսական անարատութեան ուխտն ունէր:
Եւ որովհետեւ նա օրէ օր միշտ կը զար-
գանար առաքլութեան և բարեպաշտա-
կան զգացմանց մէջ, բոլոր շրջակայ տե-
ղերու այդ բարի գիւղացիները կը նկա-
ւելին զինքը իբրև Աստուծոյ նուիրուած
և առանձին շնորհք վայելող աղջիկ մը: Ա-
նոր համար միաբան հաւանութեամբ իրեն
սեպհականեցին իբրև պատուոյ տեղ, մա-
տրան մէջտեղը, և ճիշդ այն տեղը ուր
որ պառկեցուցած էին զինքն իւր հի-
ւանդութեան ժամանակ: Տարիքն առաջ
երթալով, նա ծնրադիր և անշարժ կը
մնար հոն ամբողջ ժամեր, և երբոր գիշեր
ըլլալու միջոց գիւղացւոց ամբոխը, իբրև
մեղուաց փեթակ մը խառն կերպով կը
լեցուէր մատուռը երկրին թուխ զգեստով,
ինքն այս փոքրիկը փաթթուած շլացու-
ցիչ սպիտակութեան մը մէջ, խորհրդաւոր
կանթեղին ճառագայթները իրենց բոլոր
լիութեամբ ընդունելով իր վրայ, լուսաւոր
և պայծառ կը շողար իբրև ի կատարում
հայրական աղօթից, և կարծես որ ինքն ալ
լոյս կը սփռէր իւր շուրջն եղած ամենա-
մութ առարկայից վրայ: Լուռ մտածու-
թեան և ջերմեռանդն աղօթից միջոց, իւր
սիրտն ալ մեծապէս կը հրճուէր Սըր-
բազան կանթեղին հաճոյական կամուռ-
թիւնը տեսնելով: Մայր մտնող արեւ-
գական գեղեցկութիւնները, ամառնային
գիշերուան պայծառ լոյսը, այնչափ հրա-
պուրիչ չէին իրեն համար, որչափ այդ
կանթեղին քաղցր ճառագայթները իրեն
կը թուէր որ չորս կողմ այնպիսի սուրբ
և անարատ լոյս կ'արձակէին որ անկա-
րելի էր անոր առջև սուրբ և հրեշտա-

կային մտածութիւններէ զատ բան մ'ու-
նենալ, և ոչ ալ սիրալիւր և զողոր խօս-
քերէ զատ բան մ'արտասանել, իրեն կը
թուէր որ երկնային ռոգիներ այն օդին
մէջ կը թռչէին, և թէ քերովբէները կը
գուարճանային փառաց ամպին մէջ, որ
բոցին շուրջը կը ձևանար: Եւ միայն այս
խորհրդաւոր լոյսը չէր որ այնչափ գեղե-
ցիկ կ'երևնար իւր աչաց, այլ կը կարծէր
թէ անոր հետ ներդաշնակ ձայներ ալ կը
լսուէին իւր ականջին, որ աղօթքներ կը
չջնջէին իրեններուն հետ միասին, և կար-
ծես թէ այդ փափուկ և համեստ երգերուն
կ'ընկերէին ռոգիներ ոսկեզօծ տաւիղներու
վրայ քաղցրաձայն նուագելով: Իրեն կը
թուէր նաև որ ամէն անպաճոյճ և երկկային
մանկիկներէ ալ կը բուրբէր ամենաքաղցր
անուշահոտութիւն, բաւստան մը և ամենա-
մաքուր խունկը: Վերջապէս, ոչ մէկ տեղ
աւելի լուսնային երկնից հետ միացած չէր
երևեր իրեն. ոչ մէկ տեղ, ոչ մէկ պարա-
զայ այսպէս քաղցր կերպով զինքն երկրէս
չէր բարձրացներ սուրբ իղձերու թևոց
վրայ, ինչպէս այս մենաւոր տաճարը, իւր
սիրելի աստեղ լուսով զուարթացած:

Ոմանք դիտած են թէ ինչպէս այն ան-
ծինք որ շատ ժամանակ միասին կ'ապրին,
տեսաւ մը փոխադարձ նմանութիւն կը
ստանան այնպէս որ մինչև իսկ մերձա-
ւոր ազգականներ ըլլալ կը թուին, ասոր
համար շատերը կը դիտէին, որ այս աղ-
ջիկը յաճախ և երկար ժամանակ Անա-
բատ կոյս Աստուածամօր այս գեղեցիկ
պատկերին առջև ծնրադրելով, աչքերն
անոր վրայ սևեռած, այս քաղցր լուսոյն
նեքը, իրեն դիմագծերն ալ կամաց կա-
մաց նոյն քաղցր և համեստ արտայայ-
տութիւնը կ'առնուին, այնպէս որ կենդանի
օրինակութիւն մը կը նմանէր այդ անկնե-
ղան պատկերին:

ԳԼՈՒԽ Բ.

ԻՒՐ ՍՏՈՒԵՐՆԵՐԸ

Արդ վեց տարի անցած էր այն օրէն
ի վեր յորում ուխտն արտասանուեցաւ,

ուրախութեան և զոհութեան տարիներ,
երբոր այնպիսի փոփոխութիւն մը պա-
տահեցաւ Բիէրրոյի փոքր գերդաստանին
մէջ, որ անոր երջանկութիւնը միջոցոց,
և իրեն հետ բերաւ ամէն երեսակայութենէ
վեր ցարև և թշուառութիւններ:

Այս բանէս քիչ ժամանակ առաջ, եր-
կու օտարականներ եկան իրենց ընտա-
նեօք իրենց բնակութիւնը հաստատելու
այդ տեղերու մէջ: Անպաճոյճ էր անոնց
երևոյթը, և չկար անձ մը որ անոնց
վրայ տեղեկութիւն ունենար: Անոնք կտոր
մը երկիր գնեցին, ամէն բնակութիւններէ
քիչ մը հեռաւորութեամբ, և հոն շինեցին
փայտէ մեծ խրճիթ մը, որ շատ նմանու-
թիւն ունէր ուրիշներուն. բայց զանկայ
կանգնած միջոցին, նախանձաւոր կը
թուէին որ մէկը զիրենց չզննէ, և երբոր
զայն լնցուցին բնաւ մէկ մը չհրաւիրե-
ցին զայն տեսնալու և հոն մտնալու համար:
Կը տեսնուէր որ իրենց արք մասնաւոր
զբաղմունք մը չունէին, իսկ կանայք ծոյլ
և աղտոտ էին: Սակայն իրենց զիրենք
իրենց դրացիներէն աւելի հարուստ կը
ցուցնէին, և տօնի ու կրթակի օրեր ա-
ւելի շքեղ երևոյթով մը կ'երևնային: Ոչ
ոք անոնց վրայ բացարձակ և ապահով
վճիռ մը կ'ընար տալ, բայց սակայն յայտնի
էր, որ անոնց շուրջը տեսակ մը գաղտնիք
կ'իշխէր:

Այս անծանօթներուն իրենց բնակու-
թիւնը հոն հաստատելէն քիչ ամիսներ
վերջ, կինը և աղջկը յայտնի փոփոխու-
թիւն մը տեսան Բիէրրոյի կերպին վրայ:
Այնքան հաճութեամբ չէր երթար իւր աշ-
խատութեան, և բաւական պատճառներ
կային հաւատալու որ շատ հոգ չէր ընել
աշխատութեան, որովհետև ամէն օր հետ-
զհետէ կը նուագէին իւր վաստակները:
Նա մտածկոտ, քաջուած և զօրեղ կամակոր
բան մը դարձած էր, և անտարակոյս կը
ցուցնէր որ ծածուկ մտածութիւն մ'ունի
զոր կը պահէր իւր ընտանիքէն:

Հազիւ իւր աշխատութիւնը լնցնելէ
յետոյ, փոխանակ տուն դառնալու իւր սի-
րելիաց ընկերութեամբ սփոփուելու հա-

մար, ասոնք բռնադատուած էին քանի մը ժամ անոր սպասելու լուռ ցաւոց մէջ, և երբ կը հասնէր ցուրտ և կարուկ պատասխաններ կու տար պզտիկ պատճառանք մը փնտռելով իւր յապաղումը արդարացնելու համար: Վերջապէս օր մը, աշխատութեան երթալու միջոց, ըսաւ իւր կնոջ. «Աննիդա, հաւանականաբար այս գիշեր շատ ուշ պիտի դառնամ, անոր համար ինծի մի՛ սպասէք: Գործեր ունիմ որ գիտ կրնան բռնել մինչև վաղը առաւօտ»: Եւ այս ըսելուն պէս կնոջ ժամանակ չթողուց պատասխանելու, և երկու խօսք մ'ըսելու, և դուրս ելաւ անպարտանօք: Ո՛հ, ինչ անմխիթար օր եղաւ այդ՝ մօրը և աղջկան համար: Կարծես երկուքն ալ կը վախնային իրենց կասկածներն իրարու յայտնելու, և իւրաքանչիւրը կը ջանար արցունքը ծածկել դիմացինէն: Աղջկան գալով՝ թէպէտ և ութը տարին դեռ չէր լինցուցած, սակայն ինքն ալ բաւական ըմբռնողութիւն ունէր ճանչնալու համար իրաց բռնած ամենագէշ ընթացքը: Եւ ասոր համար, գրեթէ երկուքն ալ նոյն դրողմէ առաջնորդուելով, երբ երեկոյ եղաւ քաղցին դէպ ի Մոնթէ-Մարիա, իրենց ցաւերը զեղլու և խորանին դիմաց մխիթարութիւններ փնտռելու համար, Հոն Մարիամ սովորական տեղը ծուր դրաւ կանթեղին ետեւը, վերցուց աչքերը և սիրտը և շուտ մ'ընկզմեցաւ մտածութեանց մէջ, և իւր մտածութիւնը հետեւեալն եղաւ.

Նա մտածեց այն անմխիթար պատեւրուն վրայ որ կը սպասէին մեր ֓րկչին ամէնօրէնեալ Մօր երրորդ իջաւ Գողգոթա, յէն, այն ցաւագին տան, այն մեղամաղձոտ խուցին, և այն անըուն անկողնին վրայ որ իրեն պատրաստուած էր ցաւոց և ստուերաց օրէ մը վերջը: Եւ հոս բազմատեղով ցաւ մը միւսին հետ, ո՛հ, որւչափ պզտիկ երեցան իրեն կրածները, անոր կրածներուն դիմաց: Աստի անցաւ մտածելու անոր աչաց վրայ որ կը նստէին Յիսուսի արիւնալից և ապտակեալ դիմաց. ականջաց վրայ՝ որ դեռ կը թըն-

դային մուրճերու հարուածներէ, որք անոր զողողչուն մասեր կը ծակէին. արտին վրայ՝ որ խոցուած էր ցաւոց սուրով մը, և կը բարախէր իւր ներքին խորշերուն մէջ, մայրենի սրտցաւի տագնապով. այն մարմնոյն և այն հոգւոյն վրայ որ կը տատանէին ցաւոց այնպիսի բեռան մը տակ, որ կարող էր խորտակել նոյն իսկ երկաթէ մեքենայ մը, և աղամանդեայ ոգի մը, բայց որուն կրցաւ համբերել իւր աննուաճելի արիւթիւնը: Եւ մտածելով այդպիսի նահատակութեանց ուկիւն մը, ո՛վ, ո՛րքան թիթե երեցան այս շնորհաց աղջկան՝ այն վիշտերը զորս Հայրն երկնաւոր իրեն սահմանած էր: Եւ գրեթէ ամէն րանէ վերջ տեսաւ զինքը, որովհետեւ ամէն գրեթէ բարեկամներ որ այս գերարգոյ Տիրամօր ընկերած էին մինչև իւր խեղճուկ քնակարանը՝ մեկնած ըլլալով, տեսաւ վերջապէս զինքը մինակ թողուած գիշերուան լուութեան մէջ կանթեղով մը, որուն ձէթը թերեւ Գեթսեմանի պարտեզէն կ'ելլար և որ կը ճառագայթէր իւր գունատեալ դէմքին վրայ, որուն վրայ այն օրը շատ աւելի ցաւեր դրոշմած էր քան թէ ժամանակը՝ տարիներ: Եւ իւր փափուկ մտքին մէջ նա կ'օրհնէր այդ տրեժոյցն և զողողչուն լոյսը որ այն ժամանակ մխիթարութիւն տուաւ Մարիամու, և այնպէս կը թուէր իրեն որ այդ փոքրիկ բոցը, որ կը վառէր այն վայրկենին իրեն և այս ցաւոց թագուհւոյն սիրելի պատկերին վրայ, որ իր առջև կեցած էր, հաւատարիմ օրինակութիւն մ'ըլլար, և առաջ գար այն բոցէն որ այն ժամանակ կը լուսաւորէր և կ'ուրախացնէր իւր սուրբ քնակարանը:

Իւր խաղաղ պայծառութիւնը այնպիսի քաղցր կերպով ազդեց աղջկան անմոլ հոգւոյն, որ իւր վշտերը միացուց այն ամենասուրբ վշտաց հետ որոնց նմանը երբէք երկիրը տեսած չէր: Իրեն այնպէս թուեցաւ որ կարծես կը կրէր կանանց մէջ ամենէն աւելի սուրբին և ամենէն աւելի ազնիւին հետ, և այն խիտ ստուերները որ առաջ նսեմացուցած էին իւր

միտքը, փարատեցան պայծառ, քաղցր, և սուրբ ճառագայթէ մը, նման անոր որ կը չափաւորէր գիշերուան սրտներն երբ այդ սրբավայրին մէջ, իսկ իմացաւ որ բոլոր այդ բաները մտածելէ վերջ գտնէ համա-կամեալ կերպով պիտի դառնար իւր խըր-հիթը:

Բայց աղօթքէն ելնելէն առաջ նուէր մ'ըրաւ առ ամենակարողն Աստուած Ս. Աստուածածնայ ձեռքը, նուէր մը զոր նա բաւական ժամանակ յետոյ հաղորդեց իւր մօրը: իսկ զգաց իւր սրտին մէջ որ իրեն այդ նուէրը ընդունելի եղած էր, և անով զօրացաւ:

Զգարծէ մէկը որ ասով մենք փոքրիկն Մարիամու իրեն հասակէն վեր զգաց-մունքներ և մտածութիւններ կ'ընծայենք: Աշխարհիս մէջ չկայ ընդհանրապէս ստոյգ և ճիշդ գաղափար մը թէ որչափ կրնան շնորհաց մէջ զարգանալ այն սղագ որոնք եկեղեցւոյ թևոց տակ միծնալով երբեմն կը նուիրուին Անոր, «որուն օրհնութիւնքը կ'երգեն նոյն իսկ դիցելի մանկանց բե-րաններ»: Մենք շատ անգամ մեր մէջ կանխահաս խելացիութեան օրինակներ ունինք, բայց քիչ անգամ կանխահաս առաքինութեան օրինակներ, թէպէտ և թէ առաջինները և թէ վերջինները հաւասար-բաւական բնական կարգի մէջ են: Սակայն ոչ թէ միայն սրբոց վարքերը, ինչպէս Սրբուհի Ռոպայ Լիմացւոյն, Սրբուհի Սա-րիմ Մագդաղենացի Բացեանին, Սրբուհի Կատարինէ Սինացւոյն, հոգեւոր լուսոյ և խելացիութեան օրինակներ կը ներկայա-ցնեն մեզի, հաւասար և աւելի փոքր հա-սակի մը մէջ, այլ նաև մեր օրերուն մէջ ալ շատ օրինակներ կրնան բերուիլ առանց մեր անձնական ծանօթութենէն դուրս ելնելու:

Եւ եթէ ծնողները և մանաւանդ մայ-րերը գիտնալին թէ ինչպէս պէտք են դաստիարակել Աստուծոյ համար իրենց որդիքը նոյն իսկ որբանէն սկսեալ, եթէ փոխանակ օգնելու իրենց տղայական կա-մապաշտութեանց և փափայելու իրենց կրքերն ու քմահաճութիւնքը, իրենց բանա-

կանութեան առաջին արշալոյսը ուղղելն ի ծանօթութիւն և ի մտածութիւն առ-տուածային գթութեանց, և հագիւ թէ բացուին անոնց շրթները առաջին շեշ-տերու, սորվեցնելին իրենց արտասանել Յիսուսի և Մարիամու երկու ամենաքաղցր անունները, շատերը որ այժմ ստիպուած են լալու իրենց զաւակաց յիմարութեանց և անստիպ վրայ, ընդհակառակն շնորհա-կալ պիտի ըլլային Աստուծոյ, որ սուրբ մը տալով օրհնած է իրենց ընտանիքը:

Սակայն շարունակենք պատմութիւնը. — երբ որ մայրը և աղջիկը տուն դար-ձան, առաջինէն շատ աւելի տրամադրեալ զգացին իրենք զիրենք տիրութեան համ-բերելու, և ոչ ալ այդ տան ստուերները այնչափ թանձր երեցան իրենց, մանա-ւանդ այս աղջկան: Մանաւանդ թէ նա զրբթէ ուրախ կը թուէր, երբ հրափրեց իւր մայրը վստահութիւնը Աստուծոյ և իւր ամէնորհնալ Մօր բարեխօսութեան վրայ դնելու: Արդէն առաւօտը բաւական առաջ զացած էր, երբոր Բիէրոյ յանկար-ծակի մտաւ տօգոյն և վայրենի նայուած-քով մը: Հագիւ հասած, քսակ մը նետեց սեղանին վրայ որուն բոլորտիքը նստած էին կինը և իւր աղջիկը, և առանց բառ մ'ալ արտասանելու գնաց իւր սենեակը պառկելու: Զարմացած և յափշտակուած այս տարօրինակ տեսարանէն, երկուքն ալ երկար ժամանակ իրարու երես նայեցան, զրբթէ նոյն իսկ առանց շունչ առնելու, և երբոր Բիէրոյ քանի մը ժամէն խռովա-լից ջունէն վերջ ելաւ իւր խուցէն, զար-մացած և շփոթած քնաց տեսնելով որ դեռ իւր քսակը կեցած էր այնտեղ ուր ինքը նստած էր զայն, որովհետեւ երկու կիներէն ոչ մէկը ձեռք երկնցուցած էր անոր վրայ:

«Ի՞նչ կը նշանակէ այս, հարցուց Բիէր-ոյ քիչ մը դառնութեամբ: Միթէ այս քսակը թունաւոր անասուն մը կարծեցիք, որ անոր զպչելու ալ չէք համարձակած: «Բիէրոյ, պատասխանեց իւր կինը, ուսկի՞ց ջու ձեռքդ հասած է այս»:

«Վաստկած եմ համեստութեամբ, կ'ա-

պահովցնեմ զքեզ, պատասխանեց նա, գէթ կը յուսամ որ պիտի չհամարիք թէ ես կարող ըլլամ գողութիւն կամ աւազակութիւն ընելու»:

«Ո՛հ, ո՛ր էր թէ այսպէս ըլլար, վրայ բերաւ իւր կինը, բայց այս վերջին ժամանակաց մէջ դու խիստ թիչ աշխատեցար, և քու արուեստովդ, այնչափ ստակ դիզելու համար շատ աւելի երկար ժամանակ և մեծ ճարտարութիւն մը պէտք պիտի ըլլար քեզի: Լեցուն քսակ մը, թաթաղուն ասոր նման, և գիշերուան մը մէջ վաստկուած, պէտք ես դու ինքնին խուստովանիլ, որ գէթ շատ կասկածելի բան պէտք է համարիլ»:

«Սակայն դուք ինքնին դիւրաւ պիտի հաւատարց, կրկնեց Բիէրրոյ, որ այս ստակը համեստութեամբ վաստկած եմ, երբ ըսեմ ձեզի թէ բարեկամութիւններ ըրած եմ որոնք ինծի բացած են լաւ և շահաւէտ առուտոր մ'ընելու ճամբան, և կը յուսամ որ ասոնք դեռ առաջին պտուղները միայն ըլլան»:

Խեղճ կինը ուրախացաւ այս խրախուսիչ խօսքերը լսելով: Բայց թէպէտ և գոհ էր և առաւ քսակը, սակայն երբէք քաջութիւն չունեցաւ որեւիցէ կերպով մը անոր մէջի ստակէն գործածելու: Նա կրկնապատկեց իւր ճարտարութիւնները և նախադասեց մեռնիլ իւր ոստայնին դիմաց արտաքին երևոյթները պահելու և կարօտութեան մէջ չիյնալու համար, բայց չեղաւ երբեք որ կամ ինքը կամ աղջիկը այդ կասկածելի ստակը գործածել ուզեն: Եւ Բիէրրոյ շատ անգամ դեռ ուրիշներ ալ կը բերէր, գիշեր մը և երբեմն երկու գիշեր և յաջորդ օրը, դուրսը մնալէն վերջը: Բայց ստակի այսչափ մեծ առատութիւն մը միշտ առանց դպչելու կը մնար: Վասն զի իրենք միշտ ունէին աչաց առջև ստոյգ և որոշիչ նշան մը, Բիէրրոյ բաւական ժամանակէն ի վեր, և ճիշդ այն ժամանակէն յորում սկսած էր վաստկելու այդ ստակը, նոյն չէր այլևս ինչ որ առաջ էր: Չանց կ'ընէր ամէն կրօնական պարտքերը, քիչ անգամ կը

տեսնուէր եկեղեցւոյ մէջ, ի բաց առեալ Կիրակի օրը, և այն ալ շարաթը մէկ երկու անգամ, կը թուէր որ չէր արտօժեռ իւր պարտքը կատարել: Անգամ մը պատահեցաւ որ իւր փոքրիկ աղջիկը հրաւիրեց զինքը ճաշէն վերջ ելնելու Մոնթէ-Մարիա, ուր մատրան մէջ իւր սովորական տեղն երթալով եռանդեամբ աղօթեց իրեն համար, և նորոգեց իր անձին նուիրումը, որուն վրայ արդէն խօսեցանք: Նա երկարեց իւր աղօթքները մինչև ալուստ մտնալէն բաւական վերջ, Սրբաբանին Կանթեղին ախոյոթելի լուսոյն տակ, բայց երբ ոտքի վրայ ելաւ չգտաւ այլևս իւր հայրը: Սա դուրսը կը սպասէ իրեն, և իւր սիրալիք գանգառներուն թէ ինչո՞ւ համար անհամբերութեամբ թողուցած էր եկեղեցին, կը պատասխանէր. «Էս ալ ընդհակառակն կը զարմանամ որ ինչպէս դու կրնաս այսպէս երկար ժամանակ կենալ և աղօթել այս մութ և տխրագոյն լուսոյն տակ: Այդ կանթեղով եկեղեցին ինծի կ'երևի գերեզմանական մութ և միանգամայն ճշիշ զգուելի կամարի մը պէս: Պատեհուն վրայի նկարները ինծի կը թուէին մէյմէկ հոգիներ, որ ծուռ աչքով ինծի կը նային: Նոյն իսկ ամենօրեան Կուսին պատկերն ալ ցուրտ և խիստ նաշուածք մ'ունէր: Անկարելի եղաւ այլևս երկար ժամանակ հոն կենալ և դուրս եկալ կտոր մը զով օդ շնչելու համար».

— Այս խօսքերը և զգացումները լսելով փոքրիկ աղջիկը հառաչեց և ըսաւ. «Ո՛հ, ամենասիրելի հայր իմ, դու սովորութիւն չունէիր առաջները այսպէս խօսելու: Պէտք է որ արատ մ'ըլլայ այդ սրտիդ մէջ, որ չսիրեր և չհամարձակիր աղօթել Սրբաբանին խաղաղ լուսոյն տակ:

Բիէրրոյ լուսեմամբ տուն դարձաւ, և քանի մը շարաթ աշխատութեան աւելի ջանք ցուցուց, բայց շատ ժամանակ չանցաւ՝ վերստին սկսաւ իւր նոր սովորութիւնները, և իւր բացաղայութեան ժամանակ դեռ աւելի երկարեց, օրեր շարաթներու փոխուեցան: — Հիմայ ժամանակն է այլևս պարզելու և յայտնելու

իւր զփրաղէ փոփոխութեան պատճառը: — Այդ գիւղի մէջ բնակելու համար նոր եկող բնակիչները, որոնց վրայ արդէն խօսեցանք, կը վերաբերէին այն անպա- տիւ և նուաաստ մարդկանց դասին, որ մասնաւորապէս լեռնոտ երկիրներու մէջ իրեկ իրենց ասպարէզին մէջ կը սկսին գործել երկու օտար տնտրութեանց սահ- մաններուն վրայ: Ասոնք մաքսանենգներ էին, որ յատուկ շահի մը համար յանձն կ'առնուին Գաղղիայէն վաճառքներ անցը- նել Սպանիական հողուն վրայ, նենգելով մաքսատան իրաւունքները, և այնպիսի փախուստներ յաճախ մեծ բազմութեամբ և շաք վաճառքով կ'ըլլային, արհամարհ- ւով ոստիկանութեան արթնութիւնը որոնց վրայ յարձակելու և հետեւեցին կոռուելու խիղճ չէին ընել եթէ յանկարծ վրայ հասնէին: Այս մարդիկ և իրենց ընտա- նիքները հին յանցաւորներ էին, արդա- րութեան ձեռքէն փախած, և շատ ճար- պիկ էին իրենց այս նոր արուեստին մէջ: Իրենց սովորական բնակութեան տեղւոյն մէջ արդէն բաւական ճանչցուած ըլլալով և դիտած ալ ըլլալով որ Մոնթէ-Մա- րիայի մօտերը անցքեր կան ուր մաքսա- ւորները շատ չէին հսկեր այն կողմի գիւ- ղացուց ծանօթ պարկեշտութեան համար, օգուտ քաղել որոշեցին Մաքսատան զըլ- խաւորներուն այս անհոգութենէն, և հոն հաստատեցին իրենց բնակութիւնը: Սա- կայն իմացան փութով որ պէտք էին ի- րենց ընկեր առնուլ այն տեղի գիւղացի- ներէն մէկը, որ շատ վարժ ըլլայ ժայ- ոերու և լեռանց մէջ ամենէն աւելի ծա- ծուկ և անպահապան անցքերու, և քիչ մը ժամանակ քննած ըլլալով իրենց զրա- ցիներուն բնակութիւնները լաւ ճանչնալու համար, ընտրեցին խեղճ Բիէրըն որպէս զի իրենց զոհ ըլլայ, ոչ անոր համար միայն որ ամենավարժ լեռնցի մըն էր, և կը ճանչնար ամենէն աւելի ծածուկ տեղերը, այլ նաև անոր համար որ եթէ յաջողէին աւելի զինքը, որ խիստ դիւրան- սաց բնաւորութիւն մ'ունէր, որ արդիւնք մ'էր իրեն առաքինութեան, շատ աւելի մեծ

օգուտներ պիտի քաղէին իրմէ, և զինքը շատ աւելի կատարելապէս իրենց ձեռաց տակ պիտի կարենային բռնել՝ քան թէ ուրիշ որ և է բիրտ և կոշտ գիւղացի մը: Աւստի անոնք սկսան կամաց կամաց հաւ- տարութեամբ իրեն հետ ընտանենալ, և իւր բարեկամութիւնը վաստկել իրեն և իւր ընտանեաց վրայ յատուկ խնամք մը ցուցնելով, չնչին կերակուրի մը համար, իրեն ամրողջ օրը այսպէս աշխատիլ տես- նալնուն վրայ: Մինչդեռ այնքան ստոյգ յաջողութիւն ունեցող վաճառականական գործերու զբաղելով, ամենակարճ ժամա- նակի մը մէջ պիտի կարենար լաւագոյն դիրք մը կազմել իրեն: Առաջին անգամ- ները Բիէրըն անտարբեր կերպով մոտիկ ըրաւ այս նոր, բայց ստախօս բարեկամ- ներու խօսքերուն, յետոյ հետաքրքրութիւն ունեցաւ իմանալու անոնց հրապուրիչ թե- լաղութիւնները, և հետաքրքրութիւնը մինչև իսկ ճշմարիտ մտածութեան փո- խուեցաւ: Անոնք վերջապէս պարզեցին իրենց գիտութիւնը, և նա զարհուրած մնաց: Բայց անոնք այս բանին պատրաս- տուած էին, և առաջին յարձակումը տա- լէն վերջ, սկսան իրեն խղճահարութիւն- ները վերցնել: Ճշմարտութեան երևոյթ մը տալով իրեն ըսին որ իրենք Գաղղիացի հպատակներ ըլլալով, հետևաբար պար- տաւորուած էին պահելու սպանիական օրէնքները, որոնք միայն կ'արգելուին Գաղ- ղիական ապստեղը Սպանիոյ մէջ մտցնել, և թէ այս պատճառաւ՝ որ և է անիրա- ւութիւն կամ յանցանք չկար իրենց ը- րածին մէջ, իրենց ոճով անոր ապացուցին որ իրենց պատահելիք կորստեան վտանգ- ները ճնշութեան առնելով, այս ալ ճշդ վաճառականական տեսութիւն մ'էր, ինչ- պէս որ և իցէ ուրիշ տեսութիւն. նման էր այդ՝ պատերազմի ժամանակ եղած ձեռն- արկութեան մը, կամ վաճառականական նաւու մը, որ ձմերուան մէջ կը զրկուէր մըրկայոյզ ուլկիանոսին մէջ:

Վերջապէս Բիէրըն յանձն առաւ ա- նոնց հետ միանալ իրենց արշաւանքներէ

միոյն մէջ, և անոնք այսպէս յարմարացուցին որ այդ ամենէն աւելի զիւրին, հաճելի և յաջողեցնէին մին ըլլայ, և ջահաժնուն մէջ իրեն իրեն մասն, ունեցաւ այն քսակը զոր տեսանք որ իւր խորճիին ստոյլին վրայ նետեց: Թէպէտ և կը զգար որ խիղճը յուզմանց մէջ է, սակայն ստակին սէրը արդէն իւր սրտին մէջ արմատ ձգած էր, և իւր խորամանկ հրապուրողներուն ճարտարութենէն շուտ մը այնպէս յաղթուեցաւ, որ ալ երկար ժամանակ պատեւրագմելու և անոնցմէ ազատուելու ոյժ չունեցաւ: Այս է ահա բազմաթիւ բարի, բայց տկար հոգիներու պատմութիւնը, որոնք խարբրաններուն ճարտարութեանց մտիկ կ'ընեն, իրենց բարութիւնը՝ զիրենց զիրանաց և հլու գործիներ կ'ընէ, զօրաւոր, խորամանկ, և յանդուգն եղեռնագործներու: Առաջին անկումներէ վերջ, իւրեն ուժը նուազեցաւ, և նա, թողուց որ իրեն հրապուրիչները բոլորովին իրենց կամաց համեմատ գինքը կառավարեն:

Բիւրրոյ Մոնթէ — Մարիա սրբաբանին աջեկութիւն ընելէ վերջ, ինչպէս որ ներկարագրեցինք, իւր ընկերները, վախճալով որ նա իրենց որոգայթներէն ազատի և զիրենց մասնէ, որոշեցին որ եղբրանց մէջ աւելի խոր ընկման գինքը: Նախ և առաջ, հազիւ թէ համոզեցին զինքը վերադառնալ իրենց հետ միասնալու, զինքը գործածեցին աւելի դժուարին արշաւանքի մը, յորում, ինչպէս իրենք կը գուշակէին, զինուորաց հետ հանդիպում մը պիտի պատահէր. երկուստեք հրացաններ պարպուեցան, հարուածներ արձակուեցան, և բացարձակապէս բռնութեամբ և ուժով միայն կրցան այդ անցքը կատարել: Քիչ օրերէն վերջ ամէն գիւղերու մէջ հրովարտական հրատարակուեցան, որոնց մէջ տէրութիւնը կը խոստանար մեծամեծ վարձատրութիւններ անոնց որ յանցաւորները յայտնէին, և համախոհներուն ալ լիովին ազատութիւն ամէն պատիժներէ, եթէ զանոնք յայտնեն: Բիւրրոյին բռնատրները ցուցուցին իրեն այս հրովարտականքը, և սպառնացան իրեն որ առաջին անգամ որ

փորձէ իրենց կամքին ընդդիմանալ, պիտի տանէին սահմանազուրկ, և սպանիական տէրութեան պիտի յանձնէին զինքը: Այսու նա իրենց զոհը և իրենց գործիքն եղաւ ամէն չար գործերու համար: Այլևս իրեն անձնական կամք չունեցաւ, կարծես իր հոգին անոնց ձեռքը յանձնած էր, և բաց ի մարդասպանութենէ չկար ոճիր մը, որչափ ալ ահաւոր ըլլար, զոր գործել չտային անոր՝ իրենց կամաց և հաճոյից համեմատ: Անոնք մինչև իսկ յայտնեցին իրեն որ իրենք ճշմարտապէս արարեալ և փախստականներ էին: Ձինքը ընկեր ըրին իրենց գիշերային գողութեանց միջոց, բայց նա զգուշացաւ, իւր ժամանակաւ այնչափ երջանիկ իրճիթը, իւր ոճիրներու արդիւնքով պղծել: Միշտ կը հրաժարէր կողոպուտներէն մաս առնելէ, և ամէն անգամ որ կը դառնար իւր քնակարանը, կը տեսնուէր միշտ աւելի դժնեայ նա. յուածքով մը, աւելի տաքնապալից խրդնով և պարապ քսակով:

Մինչև իսկ իւր կնոջմէն խորշելով, և սրտի նեղութենէն ինքզինքն ուտելով, սկզբան իւր հոգւոյն մէջ տեղի ունենալ ամէնէն աւելի յուսահատական մտածութիւններ, առանց նոյն իսկ անձնասպանութիւնը դուրս հանելու: Ընկերները քանի մը անգամ տեսան զինքը որ անդունդի մը եզերքը կեցած կը նայէր, իրեն թէ յիմարաբար ինքզինքը հոն նետել ուզելով, կամ սուրի մը ծայրը կը փորձէր, իբրեւ թէ իւր սիրտը խոթել մտածէր, բայց իսկոյն սարսուռ մը կու գար վրան. զլխէն մինչև ոտքերը, յանկարծակի ետ կը քաշուէր, և զէնքը մէկդի կը նետէր, մինչդեռ ընկերները, անզգայ և վայրենի զուարճութիւն մը զգալով, կը յորդորէին զինքը որ իւր մտածութիւնը գործով կատարէ: Այո՛, Աստուծոյ շնորհքով, Բիւրրոյ կորսնցուցած չէր իւր հուստըր յաւիտենականութեան վրայ. կը յիշէր նա որ անդունդին խորութեան տակը կար ուրիշ անդունդ մը առանց յատակի, և աստուածային արդարութեան ձեռքին մէջ ալ դաշոյն մը՝ շատ աւելի սուր իրեն սուրին ծայրէն:

Աւագանիները հասկցան որ քիչ ժամանակէն իրենց անոր վրայ ունեցած իշխանութիւնը պիտի լինար, և անոր յուսահատութիւնը ծայրահեղութեան մը պիտի մղէր զինքը որ կրնար զիրենց մատնել. ասոր համար կերպերնին փոխեցին ամէնէն աւելի նուաստ սրամտութիւնը բանեցնելով. Ապահովագրութիւնը զինքը որ մտադիր էին ազատելու զինքը այդպիսի տագնապալից կեանքէ մը. Կը խնդրէին իրմէ միայն որ ընկերանայ իրենց վերջին ձեռնարկին, որ ապահով և զիւրին էր, և այս գործը լնցնելէ վերջ, իրենց պիտի թողուին այդ երկրը, և ինքն իր խաղաղութեան մէջ պիտի մնար. Խաղաղութեան մէջ. Անոնք հագու գիտէին, կամ փոյթ իսկ չէին ընել զտնալու որ յափշտակած էին զայն ամբողջապէս իւր սրտէն և մերժած իւր բովանդակ էութենէն. Այսուհանդերձ այդ խօսքերը միտիարութեան մ'եղան իւրեն, այնպէս որ կարծես կը փափաքէր որ մ'առաջ գործել այն եղանը, որ վերջինը պիտի ըլլար. Այս բանիս համար որ մը որոշուեցաւ, բայց ամիսէ մը վերջ որ դար մը թուեցաւ Բիւրրոյի Ոյ խօսք, ոչ աղայանք, և ոչ պաղատանք օգուտ մը չունեցան զիրենց հաւանեցնելու որ հաղորդեն իրեն թէ ինչ է իրենց դիտումը. Մի միայն տեսաւ նա որ անոնք կը պատրաստուին բոլորովին և յանկարծակի փախչելու համար, և այս բանս լաւագոյն ապացոյց մ'եղաւ իրեն անոնց խոստումներուն ճշմարտութեանը:

Այս միջոցին գնաց նա տեսնելու իւր խեղճ կինը և անմեղ աղջիկը. Ամէն ամիս, սկսեալ այն ժամանակէն յորում Բիւրրոն իւր չար վարուց մէջ տեսանք, ամէն ամիս զիրենց աւելի խոր կերպով ընկզմած էր թշուառութեան և տառապանքներու մէջ. Երկու զօրաղանները բնաւ տեղեկութիւն չունէին թէ ինչ էին իրեն գործած ռէիւրները, անոր համար որ նա տուն չտանելով կողոպուտէն իրեն ինկած մասը, և ցուրտ քաշուածութեամբ մը ու քմապաշտ լուութեամբ մը վարուելով հետերին, իրենց չէին գիտեր թէ ինչ բանի

վրայ հիմնէ իրենց կոտակածը, բաց անկէ որ, անտարակոյս ընկերութեան մը մէջ մտած էր չար գործեր ընելու համար. Եւ նոյն իսկ այն ատեն ալ երբ այլևս տունէն չէր ելլեր ծածուկ արշաւանքի մը համար, նա բնաւ աշխատութիւն մը չուէր, վասն զի ոչ ոք այլևս կը հոգար զինքը գործածել. Եւ այսպէս իր բնական րանին մէջ, որ տեսն մը ամենուն յարգելի էր և երջանիկ, կը տեսնուէին աղքատութեան, լքման և կործանման հետքեր. Ընտանեաց մէջ բոլորովին ցաւ և խեղճութիւն տիրած էր, չկար ոչ ախորժիկ խօսակցութիւն մը, ոչ ժպիտ մը, և ոչ փոխադարձ վստահութիւն մը. Յիւրաւի մայրն ու աղջիկը փոփոխակի կը հասկընային զիրար, բայց այդ ալ աւելի լուռ համակրանքով մ'էր քան թէ զգացմանց փոփոխակի իրարու հաղորդուելով, որովհետեւ իրենցմէ իւրաքանչիւրը վախճանով իրարու ցաւերն աւելցնելու, ընդհանրապէս լուութեամբ կը կլլէին իրենց ներքին ցաւերը, կը սանձէին իրենց հեղձմաղձուկ արտասուքը, և ուրիշ տեղ կ'երթային լալու համար. Այս ալ պէտք է յաւելու աղքատին պարծանաց համար, որ ոչ ոք իրմէ աւելի բնածին ազնուութիւն մ'ունի առաքելութիւնը զօրաղանութեանց մէջ ալ պատուելու, և կը զգուշանայ պախարակելէ և զարովելէ զանոնք՝ որ զինքը դառն փորձերու ենթարկած են. Եւ ոչ ալ երբէք Բիւրրոյի վարմունքը, որ ամենուն ծանօթ էր և հասարակաց գալթաղութեան պատճառ, այս երկու լքեալներու երեսը զարկին, վասն զի մին բարոյապէս այրի էր և միւսը որր. Ընդհակառակն կարծես թէ լոնեայն աւելի պատու մը կ'ընծայուէր իրենց վշտակիր ամենազնութեանը. Ամէն ոք հոգ մ'ունէր ասոնց համար. կարծես ամէնքը կ'անուշնէին իրենց ձայնը, երբ ասոնց խօսք մ'ուղղէին, անոնց թշուառութեան օգնելու համար շատ մը փոքրիկ ընծաներ կը զրկէին անոնց տնակը, բայց այնպիսի վարպետութեամբ՝ որ որեւիցէ պարտաւորութեան զգացումէ ազատ մնային, և յաճախ եկեղեցւոյ դրան զմիաց կը

ընչէին իրենց ականջին այն քաղցր յոյսը որ Աստուած զիրենց դարձեալ պիտի միաթաւէ։ Եւ յիրաւի Աստուած զիրենց կը մխիթարէր, վասն զի եթէ չըլլար իւր ներկայութիւնը, իւր շնորհքը, իւր լոյսը, և իւր սեղանը, այս խեղճներու սրտերը պիտի ճաթէին այդքան լքուցիչ վշտերէ։ Արեւմտեայ ատենները կը տեսնուէին միշտ խորանին առջև ծնրադիր, ուր կը գտնային միշտ այն խաղաղութիւնը և անդորութիւնը, որ յատուկ պարգև մ'է Աստուածային կամաց հետ համակալութեան։ Եւ ճիշտ այս առիթներէն մէկուն մէջ զազափարաջ նոր զուգորդութիւն մը, մեր պզտիկ ազօթող աղջկան ներշնչեց միաթարական մտածութիւններ, նման անոնց զորս տեսանք որ պզգեր էր իրեն նախ Սրբութեան կանթեղը. միայն թէ Մօրը վշտաց մտածութենէն տարին զինքը Որդւոյն վշտերը մտածելու կարողացեր էր սուրբ Գրոց պատմութեան մէջ, և հոն պատկերացած տեսած էր Զաքարիայի տեսիլը, ուր նշանակուած էր սեղանին առջևի ոսկեայ աշտանակը որուն իւրաքանչիւր կողմը ձիթնեղ Ժիւնիոյ ծառ մը կար, որուն վերի ճիւղերը ոսկիէ գաւաթներով նիւթ կը մատակարարէին սուրբ կանթեղներուն, անգագալի լուսով և օծութեամբ։ Նա կը դառնար իւր այս մտածութեանց, մինչդեռ կանթեղին մեղմ լոյսը կ'իյնար իրեն վրայ, և շատ հոգերէ յոգնած, կ'ընկզմէր բոլորովին մտածութեան այն խաղաղ վայրկեաններէ միոյն մէջ, յորում գաղափարները իրենց մէջ կը ծնանին և հոգւոյն առջև կ'անցնին իբրեւ հայելւոյ մը մէջ, իբրեւ թէ արտաքին՝ բայց անբերկրայի զօրութեան մը ներկայացուցած առարկայից ցոլացումն ըլլային։ Իրեն այնպէս կ'իյնէր որ խորանին առջևի կանթեղը կը մեծնար և ոսկիէ աւազան մը կ'ըլլար, որուն մէջտեղը կը բորբոքէր երկնային բոց մը, բովանդակ իւր մաքրութեամբ և փայլովը, մինչդեռ իւր եզերքներէն դուրս կը թափուէր ամէն կողմ անուշարար հեղուկ մը, որ ամենազուտ ձէթէ կը զոյանար. անոր մէջ մասը աներևոյթ

ձեռքեր կը ժողվէին ոսկէզօծ շիշերու մէջ, և իբրեւ անգին մարգարիտ մը կը պահուէր եկեղեցւոյ զանձառան մէջ, ուսկից կը բաժնուէր երեք վտակներու։ Նա կը սրբէր նորածին տղան, կը նուիրագործէր Աստուծոյ բարձր պաշտօնեաները, և կ'օծէր հոգեվարները, որ կը պատերազմին դժոխքի յարձակմանց դէմ։ Մինչդեռ ուրիշ մաս մը՝ իբրեւ բալասան կաթիլ կաթիլ կ'իյնար իրեն և ուրիշներուն վրայ, և ուր որ իյնար, կամ խոցուած մը կը բժշկէր, կամ վէճը մը կը միացնէր, կամ վշտեր կը մխիթարէր, և կամ սրտի տագնապներ կը խաղաղէր։ Կը հոսէր այն իւր շրթանց վրայ զմուրսի դառնութիւններէն աւելի դառն, բայց կենսատու, համեղ, և իւր սրտին մէջ սըռտադեղի մը կը փոխուէր։ Ուստի երբ դեռ աղջիկը զարմացած էր թէ ուսկից կը հոսէր այսքան առատագիւղ գետ մը, Սաբիֆայի ալուոյն անօթներուն նման, որ միշտ լի էին, մութ և ստուերոտ ձիթնեղ ճիւղ մը տեսաւ վերը, որ կախուած էր անոր վրան, և իւր ծիրանեղոյն պտուղներէն շարունակ անոր մէջ կը հոսէր իւր զօրացուցիչ հիւթին լեցուն կաթիլները, և մինչդեռ կը հիանար մտածելով թէ ուսկից կ'անտուր այս ծառն իր սրբազան հիւթը, ինքնաբերաբար խոնարհեցուց աչքերը և նայեցաւ անոր արմատին, հոն նշմարեց մեծ անձ մը, ծնրադիր ու ցաւերու և ազօթից մէջ բոլորովին ընկզմած։ Անոր դէմքը կարելի էր տեսնել, որովհետեւ նա իր գունատ ճակատը ծառէն մինչև ի գետին. սակայն անոր մթնազոյն պատմուճանը ճոխ ու զարդարուած էր արքայական զոհարներով, զմրուխտներով և շլացուցիչ պայծառութեամբ աղամանդներով։ Այս անուշերները կ'աճէին ու կը մեծնային աստիճանաբար, և նորբիակեցողով մը կ'ոռագէին այն սուրբ երկիրը. որովհետեւ անոնց խին առաջին կենսունակ կաթիլները, որոնց պիտի յաջորդէր առատահոս գետ մը, որ պիտի ողողէր ամբողջ այդ երկիրը և անտի պիտի բոխէր զօրութիւն մը ամենայն ինչ փրկելու համար։ Այս հիւթերով կը սնանէր ու կ'ուռ-

ճանար այն ծառը, որ առաջին անգամ, յետ ջրհեղեղի, ալիքներէն դուրս բարձրացուց իր գլուխը և տուաւ իւր ճիւղերը իրեն նշան մը խաղաղութեան և յուսոյ, և աղանոյ՝ մը ձեռքով՝ մարդուած աշխարհի զրկեց հաշտութեան առաջին աւետիսները։ Այս պատճառաւ ալ այս ծառին պտուղը երրորդ համարուեցաւ աշխարհին թանկագին բերքերուն մէջ, և միշտ ի մի դասուեցաւ հացի և գինւոյ (ցորենի և խաղողի) հետ Մարգարէներուն սպանալիքներուն և խոստումներուն մէջ, և անոնց հետ կազմեց այն երբեակ զօրութիւնը որով մարդիկ կը բազմանան և կը քրքագործուին գերբնական խորհրդաւոր կեանքի մէջ։

Աղջկան ընկճեալ սիրտը կարծես այս բանիս մէջ կը տեսնէր բացայայտ կապակցութիւն մը՝ այն նուիրագործութեան և իր արդեանց մէջ, ինչպէս կար կապակցութիւն մը Յիսուսի փրկչին մերոյ Յորդանանու ջուերուն մէջ ինչալուն և այս փրկարար տարրին խորհրդական նուիրագործութեան մէջ։ Յիսուսի փրկչին մերոյ սուրբ Արեան օծութեամբ սրբազործուած ձիթենին, Եկեղեցւոյ համար եղաւ նուիրական ծառ մը, որուն հիւթը կրնայ քաղցրացնել, սնուցանել, բժշկել և միանգամայն խոնարհ ու զօրաւոր ընել մարդուն հոգին՝ խորհրդաբար, և մարմինը՝ նուիրապէս։ և սա միայն յարմար է, կոյս մեղուին հարտարագործ արդիւնքին հետ, վառուելու և հառազայթելու Աստուծոյ Սրբաբանին առջև։

Անմխիթար աղջկան այս խորհրդածու-

թիւններն ունէին իրենց մխիթարութիւնը, իւր միտքն ուղղելով դէպ ի ցաւոց տեսարան մը, յորում հոգւոյ վիշտերը կըրնային համակամութիւն - քաղել։ և այսպիսի մտածութիւն մը զինքը ցնցեց։ Եթէ երկնային Երուսաղէմայ մէջ Գառնի հարսնացեալ սուրբ կուսանաց պիտի ըսուի, «Աստուած, ձեր Աստուածը օծեց զձեզ ուրախութեան իւղով», այս միջէ կրնայ արդեօք նշանակել որ հոս երկրիս վրայ չըլլալ նաեւ վշտաց իւղ մը՝ որով Աստուծոյ ծառաները կ'օծուին, և աւելի հաճոյ կ'ըլլան։ Երանի՛ այն կուսին որ իւր փեսային սպասելով, այս սուրբ իւղով լեցուցած է իւր կանթեղը, և իւր ամանին մէջ ալ իւղի մեծ պաշար ունի վախճալով՝ որ յանկարծ կրնայ շիջանիլ։ Եթէ պակսի ալ, իսկոյն թող վազէ հոն ուր կրնայ գտնել լաւագոյնը, թող վազէ ձիթենեաց լեռը, օծման և լուսոյ լեռը։

Մինչդեռ բարեպաշտ աղջիկը լի էր այս մտածութիւններով, և կ'աղօթէր որ իւր կանթեղը կարենայ վառ գտնուիլ դատաստանին օրը, մայրը կամացուկ մը իւր ուսին դպաւ, և իմացուց որ խրհիթ դառնալու ժամանակն եկած էր։ Իրեն մանկական երեակայութեան տեսիլներն աներևութացան, և անգամ մ'ալ զգաց նա որ տաքցած էր Սրբաւայրին կանթեղին քաղցր ու մեղմ ջերմութեամբ։

ՔԱՐՏ. ՎԱՅՁՄԱՆ

(Շարայարեւի)

— Ամենադժուարին իրերն են, զաղտնիք մը պահել, ժամանակը օգտակար գործածել, անիրաւութեանց համբերել։

Քիլոն

— Մտածելու վարժ հանճար մը, բարձր գաղափարներով օժտուած, և հաստատուն ուսմամբ սնած, կրնայ միայնակ ապրիլ նաեւ ամբոխի մէջ։

Ճիւղերի

1. Փոխանակ մէթի կանթեղի, կազ վառել խորանին առջև կամ վրան, ոչ միայն հոգևոսակ է ամէն խորհրդաւոր զգացման և որ և է գաղափարական սկզբունքի, այլ նաեւ բոլորովին պախարակելի է։ Ինչպիսի՛ խորհուրդներ կրնան մարդուն օրօքն մէջ ձնանել տեսնելով բնական արտաբանութեան և գեանէն բոլրած արտաբանութեանց կարային և ծծմային բոցերը։ Անարարկոյս միայն այնպիսի մտածութիւններ ու տեղերու յիշատակութիւններ՝ որ աւելի յարմար են յիշեցնելու Աստուծոյ մարդուն հետ աւագեցեկ յարաբերութիւնները, քան թէ մխիթարական ու քաղցր զօգորդ։